Սույն հայտարարության **«Ուղեկցող փաստաթղթեր»** մասում նշված խմբերին պատկանող ուսանողներին՝ ՀՖՀՀ կողմից ուսման վարձի փոխհատուցման /զեղչի/ տրամադրման համար անհարաժեշտ է մինչև 2024-2025թթ.–ի ուսումնական տարվա 2–րդ կիսամյակի դասերի մեկնարկին հաջորդող 4-րդ շաբաթվա ավարտը՝ 07.02.2025թ.-ը մինչև ժամը 23:59 ներկայացնել դիմում, որին կից «Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» Հիմնադրամին պետք է ներկայացվեն նույն **«Ուղեկցող փաստաթղթեր»** մասում նշված ցանկով սահմանված և խմբերից մեկին/մի քանիսին համապատասխանելը հավաստող՝ խմբի անվանման տակ թվարկված փաստաթղթերը: Մինչև դիմումը և կից փաստաթղթերը Համալսարանին ներկայացնելը խնդրում ենք հավաստիանալ դրանց ամբողջականության մեջ:

Դիմումները և ուղեկցող փաստաթղթերն ընդունվում են **ՄԻԱՅՆ** էլեկտրոնային տարբերակով: Դիմումները ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակով լրացնելուց հետո անհրաժեշտ է ստորագրել և լուսածրված (scan) տարբերակն ու ուղեկցող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ուղարկել **1/ՄԵԿ/** ֆայլով PDF ձևաչափով՝ ստորև նշված էլեկտրոնային հասցեներից որևէ մեկով՝ ըստ ֆակուլտետի: Ինչպես նաև էլեկտրոնային նամակի Subject դաշտում անհրաժեշտ է լրացնել՝ «**Զեղչի դիմում և կից փաստաթղթեր____անուն___ազգանուն**», հակառակ պարագայում առկա է դիմումի կորստի հավանականություն:

- ✓ ԻԿՄ ֆակուլտետի ուսանողները դիմումներն ու ուղեկցող փաստաթղթերն ուղարկում են ap_ima@ufar.am հասցեին
- ✓ Իրավաբանության ֆակուլտետի ուսանողները դիմումներն ու ուղեկցող փաստաթղթերն ուղարկում են ap_droit@ufar.am հասցեին
- ✓ Կառավարման ֆակուլտետի ուսանողները դիմումներն ու ուղեկցող փաստաթղթերն ուղարկում են ap_gestion@ufar.am հասցեին
- ✓ Մարքեթինգի ֆակուլտետի ուսանողները դիմումներն ու ուղեկցող փաստաթղթերն ուղարկում են ap_marketing@ufar.am հասցեին
- ✓ Ֆինանսների ֆակուլտետի ուսանողները դիմումներն ու ուղեկցող փաստաթղթերն ուղարկում են ap_finances@ufar.am հասցեին
- ✓ Մագիստրատուրայի ուսանողները դիմումներն ու ուղեկցող փաստաթղթերն ուղարկում են ap_master@ufar.am հասցեին

Ուղեկցող փաստաթղթեր

1. Սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) անձանց խումբ՝
   1.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   1.2. Սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) լինելու փաստը հավաստող և ՀՀ Սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկանքի բնօրինակի լուսածրված տարբերակը:

2. 18 /տասնութ/ տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած անձանց խումբ՝

2.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,

2.2. 18 /տասնութ/ տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած լինելու փաստը հավաստող փաստաթղթեր՝ ծնողների մահվան վկայականների բնօրինակի **կամ** ծնողներին մահացած/անհայտ բացակայող ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտ կամ այլ փաստաթղթերի բնօրինակները և պատճենները, որոնք կարող են հավասարեցվել վերոգրյալ փաստաթղթերին:

3. 23 /քսաներեք/ տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ /միածնող/ անձանց խումբ՝

3.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի, ինչպես նաև ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,

3.2. Միակողմանի ծնողազուրկ /միածնող/ լինելու փաստը հավաստող փաստաթղթեր՝ ծնողի մահվան վկայականի բնօրինակի **կամ** ծնողին մահացած/անհայտ բացակայող ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտ կամ այլ փաստաթղթերի բնօրինակների լուսածրված տարբերակները, որոնք կարող են հավասարեցվել վերոգրյալ փաստաթղթերին,

3.3. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրված համապատասխան տեղեկանքի բնօրինակի լուսածրված տարբերակը:

4. Մինչև 1 /մեկ/ տարեկան երեխա ունեցող անձանց խումբ՝

4.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,

4.2. Մինչև 1 /մեկ/ տարեկան երեխայի ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը:

5. 3 /երեք/ և ավելի անչափահաս կամ 3 /երեք/ և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների անդամ հանդիսացող անձանց խումբ՝

5.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,

5.2. 3 /երեք/ կամ ավելի անչափահաս երեխաների ծննդյան վկայականների բնօրինակները և պատճենները կամ 3 /երեք/ կամ ավելի երեխաների ուսանող հանդիսանալու փաստը հավաստող տեղեկանքների բնօրինակների լուսածրված տարբերակները:

Ծանոթագրություն՝ 5.2-րդ կետով նշված տեղեկանքը ներկայացնելու պահանջը չի տարածվում Համալսարանի ուսանողի կողմից Համալսարանի ուսանող հանդիսանալու փաստի հաստատման նկատմամբ: Տվյալ փաստը Համալսարանի համար համարվում է հաստատված՝ անձին, ուսանողների համակազմում ընդգրկելու իրամանով:

6. Համալսարանում սովորող 2 /երկու/ ուսանող ունեցող ընտանիքների անդամ հանդիսացող անձանց խումբ՝

6.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի, ինչպես նաև ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,

6.2. Եղբոր/քրոջ ծննդյան վկայականների բնօրինակի լուսածրված տարբերակները:

7. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող անձանց խումբ՝
   7.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   7.2. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության փաստը հավաստող համապատասխան փաստաթղթի բնօրինակի կամ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունենալու փաստը հավաստող հետևյալ փաստաթղթերի բնօրինակների լուսածրված տարբերակները՝
      7.2.1. Ուսանողի ծննդյան վկայականի կամ հայրության ճանաչման մասին **կամ** օրինական ուժի մեջ մտած և ծնող–զավակ բարեկամական կապը հավաստող դատական ակտի բնօրինակի,
      7.2.2. Ուսանողի ծնողի անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի լուսածրված տարբերակը,
      7.2.3. Ուսանողի ծնողի հաշմանդամ ազատամարտիկ հանդիսանալու փաստը հավաստող փաստաթղթի, այդ թվում՝ ՀՀ ՊՆ–ի կամ այլ լիազոր պետական մարմնի կողմից տրամադրված համապատասխան տեղեկանքի բնօրինակի լուսածրված տարբերակը:

8. Մարտական հերթապահություն անցած անձանց խումբ՝
   8.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   8.2. Մարտական հերթապահություն անցած լինելու փաստը հավաստող փաստաթղթի՝ զինգրքույկի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   8.3. Մարտական հերթապահություն անցած լինելու փաստը հավաստող այլ փաստաթղթեր՝ օրինակ՝ ՀՀ ՊՆ-ի կողմից տրամադրված տեղեկանքի բնօրինակի լուսածրված տարբերակը:

9. Սոցիալապես անապահով անձանց խումբ՝
   9.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   9.2. Սոցիալապես անապահով անձանց խմբին դասվելու փաստը հավաստող և ՀՀ Սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկանքի բնօրինակի լուսածրված տարբերակը:

10. Համալսարանի վարչակազմի աշխատողի, ամբոնի վարիչի, դեկանի զավակ հանդիսացող անձանց խումբ՝
    10.1. Անձը հաստատող փաստաթղթի բնօրինակի լուսածրված տարբերակը,
    10.2. Ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
    10.3. Ծնողի աշխատավայրից /Համալսարանի կողմից/ տրված տեղեկանքի բնօրինակի լուսածրված տարբերակը:

11. Համալսարանի հետ ծառայությունների մատուցման կամ աշխատանքային գործող հարաբերությունների մեջ գտնվող դասախոսների զավակ հանդիսացող անձանց խումբ՝
    11.1. Անձը հաստատող փաստաթղթի բնօրինակի լուսածրված տարբերակը,
    11.2. Ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,

11.3. Ծնողի աշխատավայրից կամ ծառայության մատուցման վայրից /Համալսարանի կողմից/ տրված տեղեկանքի բնօրինակի լուսածրված տարբերակը:

12. Համալսարանի հետ աշխատանքային հարաբերություններ ունեցող անձանց խումբ՝
12.1. Անձը հաստատող փաստաթղթի բնօրինակի լուսածրված տարբերակը,
12.2. Ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
12.3. Ծնողի աշխատավայրից կամ ծառայության մատուցման վայրից /Համալսարանի կողմից/ տրված տեղեկանքի բնօրինակի լուսածրված տարբերակը: